բոյն դնում, բոյնի մէջ թառում է Ռօքեսպիեռի տեսիլքը՝ արդի բուրժուան, գործարան է զետեղում, ուստ եւ թնդանօթ է շինում եւ ծախում, անխտիր կերպով, երկու կողմի պատերազմիկներին:

Աշխարհները զարնուում, բախուում եւ հրակայ վայումներով փլուում են: Քարէ Ցիսուսները կտոր կտոր վայր են ընկնում, եկեղեցիները պառկում են երեսի վրայ անաղօթք, քահանաները կրօնք են փոխում:

Բիւխները, քթի ծայրին ակնոցներ է դրել եւ մի կտոր ադիքի մէջ խելք է փնտռում: Ալկանի ամբողջ մատենաշարը եւ Նիւթապաշտ փիլիսոփայութեան կոթողները խրամների մէջ ոջիլ են կուտակում եւ որդերի աչքերի մէջ լոյս:

Տալմուդը կատաղել է: Մոսկուայի, Պետերբուրգի, Կիեւի, Խարկովի փողոցներում ամբոխներին ոճիրի եւ մարդասպանութեան աստուածադիտութիւն է քարոզում: Կարլ Մարքսը արիւնոտ մատները երկարել է Ռօդշիլդի ոսկիների վրայ, յանուն համաշխարհային տիրապետութեան: Սինագոգը հրճուում է, բորսաները տենդի մէջ են:

Հարց է, ի՞նչ են անում Ժիդը եւ Լուցատին եւ Տոտոմեանցը:

Մահը մեծ կօօպերատիվներ է բաց արել եւ ժան ապրանք է ծախում: Կեանքը ոչինչ չարժէ, մատուցուում է առանց միջնորդի:

Դէր-Զօրից մինչեւ Միջագետք արիւնների գետերը կանալիզացիայի են ենթարկել բոլոր անապատները: Իզմիրը մոխիր է, Սախարիայի տակ Պղատոնի հասարակապետութիւնն են հիմնել, ու Էրզրումից մինչեւ Կարս դայլեր են պտտում:

Գիտութիւն եւ քաղաքակրթութիւն: Ինչպէ՞ս չհաւատալ:

Պաստեօրի մանրէները հիւանդացել են եապոնական տենդով: Կատաղած շունները անհետացել են: Մարդկութեան թոքերի մէջ Կոխը ման է դալիս ինչպէս անտառում: 606-ը Հռենոսի ափերին կրակ է ոռնում:

Կանտի «բացարձակ հրամայականութեան» վրայ շնիկները միզել են, բայց մեքենաների տակ երկաթները տաք են եւ դիակ են թխում:

Լուսաւորութեան դա՛ր:

Ցարը, եկեղեցին, դպրոցը՝ հայրս: Թէփէի թատրոնը, դպրոցը, գրականութիւնը՝ Սկիւտարը:

Խենթացել են...

(Շարունակելի)

ԹՈՒՔԷՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ

ԱՐՁԱԿԱԳԻՐԸ

Գրեց՝ Ե. ՕՇԱԿԱՆ

Այս տիտղոսումին տակ կ'իյնան Ռ. Զարդարեանի խորհրդապաշտական եւ ստեղծագործական էջերը:

Խորհրդապաշտական էջերը ամբողջութեամբ մուտք ունեցած են «Ցայգալոյս»ին մէջ*):

Ուշադիր ընթերցում մը անոնց մէջ անմիջապէս կը հաստատէ ժամանակին այնքան սիրուած ու անխնայ մշակուած սեռ մը,— համբաւաւոր արձակ-fերթուածներուն մասնաւոր մէկ փոփոխակը:

Իբր կառուցում, ընդլայնում ու պսակում՝ եղանակը նոյնն է միշտ: Այսիքն՝ ընտ-

*) «Ցայգալոյս» (Արձակ էջեր. տպագր. 1910) Զարդարեան այս հատորին կազմութեան ատեն լիովին տուած է արդէն ինքզինքը: Անկէ վերջ երկու երեք հատուած հաղիւ ստորագրած է, ասոնց ալ երկուքը հէքեաթ, որոնց վրայ խօսուեցաւ վերը: Նշանակալից է, որ հատորէն դուրս ձգած է ծաւալով կարեւոր կտորներ, մէկը երկար պատմուածք մը: Բայց ներս առած է բոլոր խորհրդապաշտական էջերը: 910-ը շատ մօտիկն է արդէն 900-ին:

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան